Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2116 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունիսի 26-ի N 635-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱՑՆԵԼՈՒ

1. Ուկրաինայում բնակության իրավունք ունեցող՝ Ուկրաինայում տեղի ունեցող դեպքերի հետևանքով մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձին (այսուհետ՝ անձ) ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը (այսուհետ՝ նպաստ) նշանակվում և վճարվում է «Պետական նպաստների մասին» օրենքով նպաստի նշանակման և վճարման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն կարգի դրույթները:

2. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 26-ի N 635-Ն որոշման համաձայն, անձին նպաստ նշանակելու (վճարելու) համար անհրաժեշտ է գրությամբ ստանալ Ուկրաինայում նրան կենսաթոշակ նշանակված չլինելու (լինելու) մասին այդ պետության կենսաթոշակ նշանակող մարմնի կողմից տրված տեղեկատվությունը (փաստաթուղթը) կամ կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում՝ կենսաթոշակի գործը, ապա այդ տեղեկատվությունը (փաստաթուղթը) կամ կենսաթոշակի գործը չի պահանջվում, եթե կատարած հարցմանն ի պատասխան ստացվել է, որ հայցվող տեղեկատվությունը (փաստաթուղթը) չի կարող տրամադրվել Ուկրաինայում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ, անձի՝ Ուկրաինայում բնակության վայրում Ուկրաինայի պետական իշխանության մարմինների՝ ժամանակավորապես իրենց լիազորությունները

չիրականացնելու պատճառով, կամ հարցում կատարելու ամսվանից հետո 3 ամսվա ընթացքում պատասխան չի ստացվել:

3. Եթե սույն կարգի 1-ին կետում նշված անձը դիմում է կենսաթոշակի վերաբերյալ տեղեկատվությունն Ուկրաինայից պահանջելու կամ նպաստ նշանակելու համար, և առկա է սույն որոշման 2-րդ կետում նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա անձին նոր հիմունքներով նշանակվում է նպաստ՝ հիմք ընդունելով նրա ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում՝ 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» և 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին», 1993 թվականի դեկտեմբերի 24-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովման և պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրերի մասնակից պետությունում իրեն կենսաթոշակ նշանակված չլինելու (լինելու) մասին հայտարարությունը:

4. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված դեպքերում Ուկրաինայից պատասխանն ստանալու օրվանից հետո տասն օրվա ընթացքում կամ, եթե Ուկրաինա կատարված հարցումից անցել է երեք ամիս և պատասխան չի ստացվել, 3-րդ ամիսը լրանալուց հետո տասն օրվա ընթացքում անձին նշանակվում և վճարվում է նպաստ՝ դիմումը ներկայացվելու օրվանից:

5. Եթե սույն կարգի համաձայն անձին նպաստ նշանակելուց հետո Ուկրաինայից ստացվում է սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը (փաստաթուղթը) կամ կենսաթոշակի գործը, ապա նպաստի իրավունքը (այդ թվում՝ նպաստ նշանակելու ժամկետները) վերանայվում է այդ տեղեկատվությունը (փաստաթուղթը) ստացվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Այս դեպքում սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) նպաստառուին ավելի վճարված նպաստի գումարները հետ են գանձվում (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

վերականգնվում, բռնագանձվում) «Պետական նպաստների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված կարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ